Ճշմարտության և արդարադատության զեկույցը արտադատական կամ կամայական մահապատիժների վերաբերյալ

20 մարտի 2023թ.

Կոնտակտային անձ՝ Էմիլիա Էսմայելյան կամ Ճարմաղ Մարդի
info@cftjustice.org

2100 Մոնթրոսի պող. #715, Մոնթրոս, Կալիֆորնիա 91020
Ճշմարտության և արդարության կենտրոնը 501(c)(3) գրանցված կորպորացիա է:
ԱՄՆ դաշնային հարկ վճարողի հաշվառման համար # 87-1681664

1.0 Ներածություն

1.1 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը լայնածավալ ռազմական հարձակում սկսեց Լեռնային Ղարաբաղում էթնիկ հայերի դեմ: Պատերազմը տևեց 44 օր և ավարտվեց 2020թ. նոյեմբերին հրադադարով: Այս 44 օրերի (44-օրյա պատերազմի) ընթացքում և դրանից հետո Ադրբեջանը միջազգային իրավունքի կոպիտ խախտումներ է թույլ տվել, այդ թվում՝ խոշտանգումներ, կամայական ձերբակալություններ և արտադատական մահապատիժներ, ինչպես նաև հազարավոր հայերի տեղահանումների և նրանց ունեցվածքի կորստի ու ոչնչացման պատճառ դարձել: Ձգտելով պահպանել մարդու իրավունքների այս խախտումների ապացույցները՝ Ճշմարտության և արդարադատության կենտրոնն (ՃԱԿ, CFTJ) արձանագրել է Ադրբեջանի իրականացրած պատերազմական հանցագործությունների զոհերի և ականատեսների ավելի քան 430 ցուցմունքներ: Այս զեկույցում ՃԱԿ-ն ամփոփել է ականատեսների և տուժողների վկայությունները, որոնք, մասնավորապես, վերաբերում են ադրբեջանցի զինվորականների կողմից իրականացված արտադատական մահապատիժներին: Հաշվի առնելով այս պատմությունների խիստ զգայուն բնույթը և տուժողների ինքնությունը գաղտնի պահելու համար՝ ՃԱԿ-ը չի հրապարակում վկաների անունները, այլ նրանց ներկայացնում է կոդավորված քարտային համարներով[1]:

1.2 ՃԱԿ-ն ԱՄՆ-ում գործող իրավապաշտպան հասարակական կազմակերպություն է, որը փաստագրում է հակամարտության գոտիներում մարդու իրավունքների և ռազմական հանցագործությունները: ՃԱԿ-ն արձանագրել է ավելի քան 430 ականատեսների և տուժողների վկայությունները, որոնք հաստատվել են իրեղեն ապացույցներով և դատաբժշկական փորձաքննությամբ և վկայում են 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո Ադրբեջանի զինված ուժերի կողմից մարդու իրավունքների լուրջ խախտումների և պատերազմական հանցագործությունների մասին: Կենտրոնը պահպանում է նման ապացույցները և դրանք հասանելի դարձնում կրթական նպատակներով, շահերի պաշտպանության և հնարավոր դատական գործընթացների համար: ՃԱԿ-ի առաքելությունն է առավել լսելի դարձնել մարդու իրավունքների խախտման, ներառյալ խտրականության, էթնիկ զտումների, տեղահանումների, պատերազմական հանցագործությունների, զանգվածային վայրագությունների և ցեղասպանության զոհ դարձածների ձայնը:

[1] «Հետաքննության մեթոդաբանություն» (*Ճշմարտության և արդարության կենտրոն*, վերջին անգամ մուտք են գործել 2023թ. մարտի 20-ին), https://www.cftjustice.org/investigations-methodology/.

2.0 Ընդհանուր տեղեկություններ

2.1 Լեռնային Ղարաբաղի հակամարտության և էթնիկ հայերի դեմ Ադրբեջանի կողմից պետական մակարդակով հովանավորվող հարձակումների արմատները տանում են մինչև 1923 թվականի հուլիս[2], իսկ էթինիկ ջարդերը տեղի են ունեցել 1980-ականների վերջերին և 90-ականների սկզբին Սումգայիթում[3], Բաքվում[4] և Մարաղայում[5]:

2.2 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանը կատարել է միջազգային իրավունքի լուրջ խախտումներ, այդ թվում՝ քաղաքացիական անձանց և ռազմագերիների արտադատական, կամայական մահապատիժներ: 2020 թվականի հոկտեմբերի 11-ին Լեռնային Ղարաբաղի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը հայտարարեց, որ առնվազն հինգ խաղաղ բնակիչ է սպանվել Հադրութում, երբ ադրբեջանական ստորաբաժանումները մտել են քաղաք: Համացանցում տեղադրվել են մի շարք տեսանյութեր, որտեղ ցուցադրվում են սպանված, գլխատված կամ խեղված հայ ռազմագերիներին կամ քաղաքացիական անձանց: Տեսանյութերը պարբերաբար հրապարակվում էին նաև ադրբեջանական Տելեգրամյան ալիքներում և ավելի ուշ ջնջվում[6]: 2020 թվականի հոկտեմբերի 15-ին սոցիալական ցանցերում հայտնվեց երկու այդպիսի տեսանյութ, որոնցում ադրբեջանցի զինվորները գերեվարել և մահապատժի էին ենթարկում երկու հայ տղամարդու, որոնցից մեկը տարեց տղամարդ էր, ով դժվարությամբ էր շարժվում: Բաց աղբյուրների վրա հիմնված ոչ պետական հետախուզական «Bellingcat» ընկերությունը պարզել է, որ տեսանյութերի աշխարհագրական տեղադիրքը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հադրութ քաղաքում[7],

---

[2] Հովհաննես Գեուկջյան «*Էթնիկ պատկանելությունը, ազգայնականությունը և հակամարտությունը Հարավային Կովկասում. Լեռնային Ղարաբաղը և խորհրդային ազգությունների քաղաքականությունը* (Routledge 2016թ.) 74–84

[3] 1988 թվականի փետրվարի վերջին Ադրբեջանական ԽՍՀ-ի ծովափնյա Սումգայիթ քաղաքի հայ բնակչության դեմ ուղղված ջարդերի՝ Սումգայիթի ջարդերի մասին տե՛ս Փիթեր Քենեզի «Խորհրդային պատմությունը սկզբից մինչև վերջ» գիրքը (2-րդ հրտ., Քեմբրիջի համալսարանի հրտրկչ. 2006թ.) էջ 272

[4] Բաքվի ջարդերի՝ 1990թ. հունվարին Բաքվի էթնիկ հայ բնակիչների դեմ ուղղված ջարդի մասին, որը տևեց յոթ օր, որի ընթացքում հայերին ծեծեցին, սպանեցին և վտարեցին քաղաքից, տե՛ս Թոմաս դե Վալի «Սև այգի. Հայաստանը և Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով (Նյու Յորքի համալսարանի հրատարակչություն 2003թ.) 175–76; Ռոբերտ Քուշենի «Հակամարտությունը Խորհրդային Միությունում. Սև հունվարն Ադրբեջանում (Human Rights Watch 1991) 7

[5] Մարաղայի կոտորածի՝ 1992 թվականի ապրիլի 10-ին Ղարաբաղյան առաջին պատերազմի ժամանակ Մարաղա գյուղը գրաված ադրբեջանական զորքերի կողմից գյուղում խաղաղ հայ բնակիչների զանգվածային սպանության մասին, որտեղ հայ մարտիկները, հետ գրավելով գյուղը, հայտնել են 43 խաղաղ բնակիչների մարմինների հայտնաբերման մասին, որոնց մեծ մասը խեղված էին, տե՛ս դե Վալ (n 4) 175–76; Ռեյչել Դենբեր և Ռոբերտ Ք. Գոլդման *«Արյունահեղություն Կովկասում. Զինված հակամարտության սրացում Լեռնային Ղարաբաղում»* (Helsinki Watch 1992թ.) 29, Ժակ Դերիդա և այլք «Բաց նամակ Խորհրդային Միությունում հակահայկական ջարդերի մասին» (*New York Review of Books*, 27 սեպ. 1990թ.), https://www.nybooks.com/articles/1990/09/27/an-open-letter-on-anti-armenian-pogroms-in-the-sov/.

[6] Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան *«2020 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արցախի բնակչության դեմ ադրբեջանական վայրագությունների վերաբերյալ երկրորդ միջանկյալ զեկույցի թարմացված հրատարակություն»* (2020թ.) https://artsakhombuds.am/en/document/735

[7] Նիք Ուոթերս «Մահապատիժ Հադրութում» (*Belingcat*, 15 հոկտ. 2020թ),

այս բացահայտումը հաստատել են Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը[8], BBC-ն[9] և ՃԱԿ-ը: Մահապատիժը կատարվել է Հադրութի քաղաքային զբոսայգում՝ 2020 թվականի հոկտեմբերի 9-ից 15-ը ընկած ժամանակահատվածում: Տեսանյութերում մահապատժի ենթարկված երկու տղամարդու ինքնությունը պարզվել է: Նրանցից մեկը քաղաքացիական անձ է Հադրութից, իսկ մյուսը՝ զինծառայող՝ հարևան գյուղից: Հրապարակված մյուս տեսանյութերում ցուցադրվում էին հայ ռազմագերիները, որոնք այնուհետև սպանվել և գլխատվել էին ադրբեջանցիների կողմից: 2020 թվականի նոյեմբերի 10-ի հրադադարի համաձայնագրի կնքումից հետո համացանցում տեղադրվել են մի շարք տեսանյութեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են հայ ռազմագերիներին և խաղաղ բնակիչներին խոշտանգում, նվաստացնում, խեղում, սպանում կամ գլխատում:

3.0 Իրավական հիմքերը

3.1 Կյանքի իրավունքը միջազգային սովորութային իրավունքի սահմանված նորմ է, որն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածում, ինչպես նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում (ՔՔԻՄԴ, ICCPR)[10], որի ստորագրող կողմ է հանդիսանում Ադրբեջանը: Դաշնագրի 6-րդ հոդվածի (1) կետով սահմանվում է, որ ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից և որ այդ իրավունքը պահպանվում է օրենքով[11]: Կյանքից զրկելը, որը չունի իրավական հիմք կամ այլ կերպ հակասում է օրենքներին և ընթացակարգերին, կամայական բնույթ է կրում: Օրենքով կամ փաստացի խտրականության հիմքով կյանքից զրկելը, ըստ էության, կամայական բնույթ է կրում[12]:

3.2 ՔՔԻՄԴ-ի ցանկացած մասնակից պետություն պետք է հարգի կյանքի իրավունքը: Դա ենթադրում է կյանքից կամայական զրկման հանգեցնող գործողություններից զերծ մնալու պարտավորություն: Ցանկացած ձևով կյանքից զրկելը, որն ինքնին խախտում է միջազգային իրավունքը, ՔՔԻՄԴ-ի համատեքստում համարվում է կամայական[13]: Մասնակից պետությունները պետք է նաև դրական միջոցներ ձեռնարկեն կյանքի իրավունքն ապահովելու համար և պատշաճ ջանասիրություն ցուցաբերեն՝

---

https://www.bellingcat.com/news/rest-of-world/2020/10/15/an-execution-in-hadrut-karabakh/.

[8] Արցախի / Լեռնային Ղարաբաղի Մարդու իրավունքների պաշտպան (@ArtsakhOmbuds) (*Twitter*, 11 հոկտ. 2020թ, 9:48, https://twitter.com/ArtsakhOmbuds/status/1315333462879019011.

[9] Գրիգոր Աթանեսյան և Բենջամին Սթրիք «Ղարաբաղյան կոնֆլիկտ. «Մահապատժի տեսանյութը դրդում է ռազմական հանցագործությունների հետաքննության իրականացմանը» (*BBC*, 24 հոկտ. 2020թ.), https://www.bbc.com/news/world-europe-54645254

[10] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր (ընդունվել է 1966թ. դեկտ. 16-ին) 1057 UNTS 407 (ICCPR) Հոդված 6; Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, UNGA Res 217(III) A (10 դեկտ. 1948թ.) (UDHR) Հոդված 3

[11] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր (n 10) հոդված 6(1)

[12] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, «Ընդհանուր մեկնաբանություն No. 36. Կյանքի իրավունք» (2019թ.) UN DocCCPR/C/GC/36, կետ 61

[13] Նույնը, կետ 12

պաշտպանելու անհատների կյանքը այն անձանց կամ սուբյեկտների կողմից պատճառված զրկանքներից, որոնց վարքագիծը չի վերագրվում պետությանը: Մասնակից պետություններից ակնկալվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ իրենց իրավապահ մարմինների պաշտոնյաների, այդ թվում՝ իրավապահ առաքելություններով զբաղվող զինվորների կողմից կամայականորեն կյանքից զրկելը կանխելու համար[14]: Այս միջոցառումները ներառում են մահվան դեպքերի և կյանքին սպառնացող այլ միջադեպերի մասին զեկուցում, ուսումնասիրություն և հետաքննություն[15]: Պետությունները պետք է աջակցեն 6-րդ հոդվածի հնարավոր խախտումների հետ կապված հետաքննության և դատական հետապնդման միջազգային մեխանիզմներին և բարեխղճորեն համագործակցեն դրանց հետ: Մասնակից պետությունները նաև պարտավոր են հետաքննել 6-րդ հոդվածի խախտման մասին պնդումները, երբ պետական իշխանությունները զենք կամ այլ պոտենցիալ մահաբեր ուժ են կիրառել են կամ ամենայն հավանականությամբ կիրառել են զինված *հակամարտության անմիջական համատեքստից դուրս*[16]:

3.3 Խոշտանգումներ դաժան վերաբերմունք, որոնք կարող են լրջորեն ազդել վատ վերաբերմունքի արժանացած անձի ֆիզիկական և հոգեկան առողջության վրա, կարող են նաև կյանքից զրկելու վտանգ առաջացնել[17]: Բացի այդ, 6-րդ և 20-րդ հոդվածների միջև կա հատուկ կապ, որն արգելում է պատերազմի ցանկացած քարոզչություն և քարոզչության որոշակի ձևեր, որոնք իրենցից ներկայացնում են խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում[18]: Կրթության ոլորտում պետական քաղաքականության արդյունքում ադրբեջանական հասարակության մեջ գերակշռում է բացասական վերաբերմունքը հայերի և Հայաստանի նկատմամբ, ինչը նպաստում է այն մտածելակերպի ձևավորմանը, որ թշնամուն պետք է դաժան վերաբերվել և կոնֆլիկտը լուծել ուժով: Այսպիսով, 20-րդ հոդվածով նախատեսված այս պարտավորությունների չկատարումը կարող է նաև իրենից ներկայացնել որպես 6.19-րդ հոդվածի[19] համաձայն

---

[14] Նույնը, կետ13

[15] Նույնը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, «Խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների հարցերով հատուկ զեկուցողի և Արդատադական, առանց պատշաճ դատավարության կամ կամայական մահապատիժների հարցերով հատուկ զեկուցողի համատեղ զեկույցը հավաքների մասին» (4 փետր. 2016թ.) UN Doc A/HRC/31/66, կետ 54

[16] Նույնը, կետ 29; *Ումեթալիևն ընդդեմ Ղրղզստանի*, Հաղորդում No. 1275/2004, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (30 հոկտ. 2008թ.) UN Doc CCPR/C/94/D/1275/2004, կետ 9.4; *Օմնեդոն ընդդեմ Պարագվայի*, Հաղորդում No.1828/2008, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (22 մար. 2012թ) UN Doc CCPR/C/104/D/1828/2008, կետ 7.5

[17] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե «Ընդհանուր մեկնաբանություն No. 36» (n 12) կետ 54; *Արուֆայիդն ընդդեմ Լիբիայի,* Հաղորդում No. 1782/2008, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (21 մարտի 2012թ.) UN Doc CCPR/C/104/D/1782/2008, 7.4, 7.6 կետեր; *Էլ Մեգրեցսին ընդդեմ Լիբիայի*, Հաղորդում No. 440/1990, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (23 մարտի 1994թ.) UN Doc CCPR/C/50/D/440/1990, կետ 5.4. Տե՛ս նաև ՔՔԻՄԴ (n 10) Հոդված 7

[18] ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտե «Ընդհանուր մեկնաբանություն No. 36” (n 12) կետ 59: *Գլխավոր դատախազն ընդդեմ Ռաջոյի* (Դատական վճիռ) ICTR-97-32-T (1 հունիսի 2000թ) կետ 22

[19] Անահիտ Հակոբյան «Պետական քարոզչությունը հանրակրթության միջոցով. Հայաստան և Ադրբեջան»

կյանքի իրավունքի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների չձեռնարկում:

3.4 Բացի այդ, մասնակից պետությունները պետք է հարգեն և պաշտպանեն իրենց գործուն վերահսկողության տակ գտնվող վայրերում, այդ թվում՝ օկուպացված տարածքներում գտնվող անձանց կյանքը[20]: ՔՔԻՄԴ-ի մյուս հոդվածների հետ մեկտեղ 6-րդ հոդվածը շարունակում է կիրառվել նաև զինված հակամարտության իրավիճակներում, որոնց նկատմամբ կիրառելի են միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) նորմերը, այդ թվում՝ ռազմական գործողությունների վարման նկատմամբ[21]:

3.5 Ժնևի կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածը, որը համարվում է ՄՄԻ-ի «նվազագույն չափանիշ»[22], սահմանում է, որ քաղաքացիական անձանց, ռազմագերիների և վիրավորում ստացած մյուս անձանց (*hors de combat*) նկատմամբ պետք է մարդասիրաբար վարվել և կոնկրետ արգելում է նման անձանց դեմ ուղղված հետևյալ գործողությունները՝ կյանքի և անձի նկատմամբ ոտնձգություն, մասնավորապես՝ բոլոր տեսակի սպանությունները, խեղումը, դաժան վերաբերմունքը և խոշտանգումները, պատանդ վերցնելը, մարդու արժանապատվության նկատմամբ ոտնձգությունները, մասնավորապես՝ նվաստացուցիչ վերաբերմունքը, ինչպես նաև մահապատժի իրականացումը՝ առանց կանոնավոր կերպով հաստատված դատարանի կողմից նախկինում կայացված դատավճռի, բոլոր դատական երաշխիքների տրամադրմամբ, որոնք անփոխարինելի են համարվում քաղաքակիրթ ժողովուրդների կողմից[23]:

(Կովկասյան հրատարակություն, 4 ապրիլի 2016թ.), https://caucasusedition.net/state-propaganda-through-public-education-armenia-and-azerbaijan/.

[20] ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտե «Ընդհանուր հաղորդագրություն No. 36» (n 12) կետ 63; ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտե «Ընդհանուր հաղորդագրություն No. 31, Դաշնագրի մասնակից պետությունների ընդհանուր իրավական պարտավորության բնույթը» (2004) UN Doc CCPR/C/21/Rev.1/Add.13, կետ 10; *Սպդիաս դե Լոպեզն ընդդեմ Ուրուգվայի*, Հաղորդում No. 12/52, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (29 հուլիսի 1981թ.) UN Doc CCPR/C/13/D/52/1979, կետ 12.1–13; *Զելիբերթի դե Կազարիեգոն ընդդեմ Ուրոգվայի*, Հաղորդում No. R.13/56, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (29 հուլիսի 1981թ) UN Doc CCPR/C/13/D/56/1979, կետ 10.1–11; *Դոմուկովսկին ընդդեմ Վրաստանի*, Հաղորդում No. 623/1995, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (6 ապրիլի 1998թ) UN Doc CCPR/C/62/D/623/1995, կետ 18.2

[21] *Պաղեստինի օկուպացված տարածքում պատի կառուցման իրավական հետևանքները (խորհրդատվական եզրակացություն) [2004թ.] ԱՄԴ Ակտ 136, կետ 106, Զինված գործողություններ Կոնգոյի տարածքում (Կոնգոյի դեմոկրատական հանրապետությունն ընդդեմ Ուգանդայի) [2005թ.] ԱՄԴ Ակտ 168, կետ 216, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կիրառումը (Վրաստանն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության)* (Ժամանակավոր միջոցներ) [2008թ.] ԱՄԴ Ակտ 353, կետ 112; ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե «Ընդհանուր մեկնաբանություն No. 36» (n 10) 63-64 կկետեր; Ուիլյամ Շաբաս 'Lex Specialis? Belts and Suspenders? The Parallel Operation of Human Rights Law and the Law of Armed Conflict, and the Conundrum of Jus ad Bellum' (2007) 40 Israel Law Review, էջ 592, 598

[22] *Ռազմական և կիսառազմական գործողություններ Նիկարագուայում և Նիկարագուայի դեմ (Նիկարագուան ընդդեմ Միացյալ Նահանգների)* (Գործի էությունը) [1986] ԱՄԴ Ակտ 14, կետ 218: Տե՛ս նաև *Դատախազն ընդդեմ Կարաջիչի* (Պատանդ վերցնելու մասին որոշում) IT-95-5/18-AR72.5 (9 հուլիսի 2008թ) 23–26 կետեր; *Դատախազն ընդդեմ Դելալիչի* (Բողոքարկման որոշում) IT-96-21-A (20 փետր. 2001թ.) կետ 150

[23] Ժնևի կոնվենցիաներ (ընդունված 1949թ. օգոստոսի 12-ին) 75 UNTS 31, ընդհանուր հոդված 3(1).

Ընդհանուր 3-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը «տարածվում է բոլոր ձեռբակալված անձանց վրա, անկախ նրանից, թե նրանց ձերբակալումը միանշանակ նրանց որպես պատանդ օգտագործելու նպատակ է հետապնդում և անկախ նրանց նախկին մարտիկի կարգավիճակից[24]: Ավելին, ընդհանուր 3-րդ հոդվածի խախտումները, միջազգային սովորութային իրավունքի[25] համաձայն, պատերազմական հանձագործություններ են:

3.6 Ժնևի կոնվենցիաների 1-ին լրացուցիչ արձանագրության[26] 44-րդ հոդվածի համաձայն՝ մարտիկ[ներ]ը, ովքեր ընկել են հակառակ կողմի տիրապետության (իշխանության) տակ, կոչվում են ռազմագերիներ: Արձանագրության 45-րդ հոդվածի (1) մասն այնուհետև սահմանում է, որ հակառակ կողմի տիրապետության տակ հայտնված ցանկացած անձ պետք է *համարվի* ռազմագերի[27]: Ժնևի երրորդ կոնվենցիայի 13-րդ հոդվածի (1) մասն, այսպիսով, սահմանում է, որ «ռազմագերիների նկատմամբ պետք է մշտապես մարդասիրաբար վարվել[28]: Մարդասիրական վերաբերմունքի պարտավորությունն «ավելին է, քան անմարդկային վերաբերմունքից զերծ մնալը և կարող է պահանջել դրական գործողություններ …ընդգրկում է ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքի բոլոր առումները. այն արդիական է բազմաթիվ հանգամանքների դեպքում, և անհնարին և նույնիսկ չափազանց սահմանափակ կլինի փորձել դրան համապարփակ սահմանում տալ»[29]: ՄՄԻ-ում մարդասիրական վերաբերմունքի սկզբունքը շատ առումներով նման է մարդու իրավունքների ոլորտում միջազգային փաստաթղթերին, որոնք պահանջում են մարդասիրական վերաբերմունք և հարգանք ազատությունից զրկված անձանց մարդկային արժանապատվության նկատմամբ[30]: Բացի այդ, «Ժնևի III կոնվենցիան պարտավորեցնում է գերության մեջ պահող տերության բոլոր գործակալներին, որոնց տրամադրության տակ են հայտնվել ռազմագերիները, պաշտպանել նրանց՝ ելնելով գերության մեջ պահող այդ տերության

---

[24] *Դատախազն ընդդեմ Կարաջիչի* (Արդարացման վճիռը մերժելու մասին որոշում) IT-95-5/18-AR73.9 (11 դեկտ.2012թ) կետ 12

[25] *Դատախազն ընդդեմ Տադիչի* (Իրավասության վերաբերյալ միջանկյալ բողոք ներկայացնելու վերաբերյալ պաշտպանական կողմի միջնորդության վերաբերյալ որոշում) IT-94-1-AR72(2 հոկտ. 1995թ) կետ 134; *Դատախազն ընդդեմ Ակայեսուի* (բողոքարկման որոշում) ICTR-96-4-A (1 հունիսի 2001թ) կետ 443; *Դատախազն ընդդեմ Կունարաչի* (բողոքարկման որոշում) IT-96-23 & IT-96-23/1-A (12 հունիսի 2002) կետ 67

[26] 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևյան կոնվենցիաների լրացուցիչ արձանագրություն, որը վերաբում է միջազգային զինված հակամարտությունների զոհերի պաշտպանությանը (ընդունվել է 1977թ. հունիսի 8-ին) 1125 UNTS 3 (Լրացուցիչ արձանագրություն I) Հոդված 44(1): «Մարտիկ» սահմանումը տե՛ս նույն արձանագրության 43-րդ հոդվածը: Այս սահմանումը փոխարինում է Ժնևի երրորդ կոնվենցիայում ներկայացված մի փոքր ավելի սահմանափակող տարբերակին, ռազմագերիների հետ վարվելու վերաբերյալ տե՛ս Ժնևի կոնվենցիան(ընդունվել է 1949թ. օգոստ. 12-ին) 75 UNTS 135 (Ժնևի կոնվենցիա III) Հոդվ, 4(A)

[27] Լրացուցիչ արձանագրություն I (n 26) Հոդվ 45(1)

[28] Ժնևի կոնվենցիա III (n 26) Հոդվ. 13(1)

[29] Նաթ Դորման և այլք (խմբ.) «*Ժնևի երրորդ կոնվենցիայի մեկնաբանություն* (Կարմիր խաչի միջազգային կոմիտե /Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն 2020թ.) կետ 1571, 1572

[30] Տե՛ս, օրինակ, ՔՔԻՄԴ (n 10) Հոդված 10(1): Տե՛ս Դորման և այլք (n 29) կետ 1572 ծանոթագրություն 9

գործակալների իրենց դիրքից»[31]: 13-րդ հոդվածի (1) մասը կոնկրետ արգելում է «գերության մեջ պահող տերության ցանկացած անօրինական գործողություն կամ անգործություն, որը կալանքի տակ պահվող ռազմագերու մահվան կամ առողջության լուրջ սպառնալիքի պատճառ է դառնում»՝ նման արարքը որակելով որպես «սույն Կոնվենցիայի լուրջ խախտում»[32]: «Առողջություն» տերմինը, ինչպես օգտագործվում է այստեղ, վերաբերում է ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեկան առողջությանը[33]: Երրորդ կոնվենցիայի 130-րդ հոդվածը լրացուցիչ սահմանում է, որ Կոնվենցիայի լուրջ խախտումներ են հանդիսանում ռազմագերիների դեմ ուղղված հետևյալ գործողությունները՝ «դիտավորյալ սպանությունը, խոշտանգումը կամ անմարդկային վերաբերմունքը, ներառյալ կենսաբանական փորձարկումները, դիտավորությամբ մեծ տառապանք կամ լուրջ մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանը վնաս պատճառելը, ռազմագերուն հարկադրելը ծառայել թշնամական տերության զինված ուժերում կամ ռազմագերուն սույն Կոնվենցիայով սահմանված արդար և կանոնավոր դատավարության իրավունքներից դիտավորությամբ զրկելը»[34]:

3.7 Որպես ՔՔԻՄԴ-ի և Ժնևյան կոնվենցիաների մասնակից պետություն՝ Ադրբեջանը պարտավոր է, ներառյալ ՔՔԻՄԴ-ի 6-րդ հոդվածի (1) մասով հարգել և ապահովել կյանքի իրավունքը (տե՛ս վերը նշված 3.1-3.4 կետերտ), ռազմագերիների և վիրավորում ստացած անձանց պաշտպանությունը՝ համաձայն Ժնևյան կոնվենցիաների 3-րդ ընդհանուր հոդվածի (տե՛ս վերևում նշված 3.5 կետը) և արգելել ռազմագերիների նկատմամբ անմարդկային վերաբերմունքը և դիտավորյալ սպանությունը՝ համաձայն Ժնևի երրորդ կոնվենցիայի 13-րդ հոդվածի (տե՛ս վերևում նշված 3.6 կետը): ՔՔԻՄԴ-ի կողմից կյանքի իրավունքին տրվող պաշտպանության կարևոր տարրը պարտավորությունն է, երբ մասնակից պետությունը տեղյակ է կամ պետք է տեղյակ լիներ ապօրինի կյանքից զրկելու հնարավոր դեպքերի մասին, հետաքննել և, անհրաժեշտության դեպքում, պատասխանատվության ենթարկել նման միջադեպերի մեղավորներին (տե՛ս վերևում): Ադրբեջանը ոչ միայն չի հետաքննել զինված ուժերի և հատուկ ստորաբաժանումների ադրբեջանցի զինծառայողների կողմից խաղաղ բնակիչների և ռազմագերիների արտադատական, կամայական մահապատիժների բազմաթիվ դեպքերը, այլև հերքել է այդ հանցագործություններին Ադրբեջանի մասնակցությունը: Այսպիսով, Ադրբեջանը խախտում է ՔՔԻՄԴ-ով և Ժնևի կոնվենցիաներով ստանձնած իր պարտավորությունները:

---

[31] *Դատախազն ընդդեմ Մրկշիչի* (բողոքարկման որոշում) IT-95-13/1-A (5 մայիսի 2009թ) կետ 73

[32] Ժնևի կոնվենցիա III (n 26) Հոդվ. 13(1)

[33] Տե՛ս, օրինակ, *Դատախազն ընդդեմ Բլաշկիչի* (դատական որոշում) IT-95-14-T (3 մար. 2000թ) կետ 156; *Դելալիչի* բողոքարկման որոշումը (n 22) կետ 424; *Դատախազն ընդդեմ Կորդիչի* (դատական որոշում) IT-95-14/2-T (26 փետր, 2001թ) կետ 245;*Դատախազն ընդդեմ Նալետիլիչի* (դատական որոշում) IT-98-34-T (31 մարտի 2003թ) կետ 339

[34] Ժնևի կոնվենեցիա III (n 26) Հոդվ. 130

4.0 Գործի հակիրճ նկարագրություն. Ռազմագերիների և գերեվարված անձանց դեմ ուղղված հանցագործություններ

4.1 Սույն զեկույցը հիմնված է Լեռնային Ղարաբաղի բնիկ ժողովրդի, ինչպես նաև Ադրբեջանի կողմից կատարված հանցագործությունների զոհ դարձած այլ անձանց զոհերի վկայությունների վրա, որոնց հետ զրուցել են Ճշմարտության և արդարադատության կենտրոնի ներկայացուցիչները և որոնք այստեղ ներկայացվում են որպես թիվ 23LC-0004, 22LC-NK0003, 21LC-NK0017, 22LC-0049, 22LC-NK0018, AUA0030, 22LC-0037, 21LC-0064, 21LC-0023 վկաներ: Այս զեկույցի նպատակն է ցույց տալ հայերի դեմ իրականացված ջարդերի համակարգված օրինաչափությունը: ՃԱԿ-ը պատրաստ է, պահանջի դեպքում, տրամադրել այս ականատեսների տեսագրված ցուցմունքները:

4.2 Վկա 23LC-0004

Այս վկան 74-ամյա մի կին է, ով ծնվել և մեծացել է Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղում: Նա երկու անգամ ենթարկվել է բռնի տեղահանման: 1992 թվականի ապրիլին ադրբեջանցիների կողմից հայ բնակչության ջարդերի պատճառով նա փախել է Մարաղայի իր տնից և իր կյանքը նորից սկսել Նոր Մարաղա գյուղում: Սեփական տունը կորցնելու պատճառով նա ստիպված է եղել 6 անգամ փոխել իր բնակավայրը:

1992թ. ապրիլի 10-ին ադրբեջանական զորքերը երկարատև հրետակոծությունից հետո ներխուժեցին գյուղ: Տեղի ինքնապաշտպանական ուժերի փոքրաթիվ ջոկատին հաջողվել էր տարհանել բնակչության մեծ մասին: Սակայն գյուղում մնացել էր թվով 118 մարդ՝ հիմնականում տարեցներ և հաշմանդամներ, կանայք և երեխաներ: Ավելի քան 50 մարդ, որոնցից 30-ը կանայք էին, սպանվել էին: Ավելի ուշ նրանց մարմինները հայտնաբերվել էին մասնատված, խեղված և այրված[35]: Ավելի քան 50 մարդ, այդ թվում՝ 9 երեխա և 29 կին, պատանդ էին վերցվել: Հետագայում երեխաները փրկվել էին, սակայն պատանդ վերցված 19 կանանց ճակատագիրն անհայտ է մնում:

23LC-0004 վկան (ականատեսը) մանրամասնում է իր գյուղում տեղի ունեցած դաժան

[35] Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի անդամ և նախկին փոխխոսնակ, իրավապաշտպան Քուինսբերիի բարոնուհի Քերոլայն Քոքսի վկայությամբ, ով ողբերգությունից անմիջապես հետո «Համաշխարհային քրիստոնեական համերաշխություն» կազմակերպության մի խումբ ներկայացուցիչների հետ այցելել էր գյուղ: Տիկին Քոքսը բազմիցս Մարաղան անվանել է «ժամանակակից Գողգոթա»: Քերոլայն Քոքս «Մարաղայի կոտորածից փրկվածները. Այն իսկապես ասես ժամանակակից Գողգոթան լինի, բայց շատ ավելի մեծ» (*Christianity Today*, ապրիլ 1998թ.), http://karabakhrecords.info/english_publication_articles_maragha.html. «Գողգոթան» Քրիստոսի խաչելության ենթադրյալ վայրի՝ Գողգոթա բլրի անվանումն է, որը 1922թ. համանուն գրքի շնորհիվ տարածվել է որպես Հայոց ցեղասպանության տերմին: Տե՛ս Գրիգորիս Բալաքյանի «Հայկական Գողգոթան» (Vintage Books 1922թ.)

սպանությունները: Նրա սկսեսուրը և 2-ամյա փոքրիկ աջիկը գերեվարվել էին ադրբեջանական զինված ուժերի կողմից: Կինը պնդում է, որ մինչ օրս սկեսուրի ճակատագրի մասին որևէ տեղեկություն չկա: Այդուհանդերձ, բանակցությունների միջոցով 2-ամյա աղջկան վերադարձրել են, բայց նա հայերեն խոսելն արդեն մոռացել էր:

23LC-0004 վկան ասում է, որ իր հարսը (ամուսնու եղբոր կինը) սպանվել էր ադրբեջանական ուժերի կողմից իր տանը: Բացի այդ, նրա մորեղբոր որդին սպանվել և թաղվել էր գերեզմանոցում: Կինը պատմում էր նաև, որ իր հարևաններից երեքը սպանվել էին: Նա նկարագրում է, թե ինչպես է տեսել սպանվածների մարմինները՝ կուտակված 15-20 դիակներով արկղի մեջ: Արկղի մեջ նրա հարսին էին գցել: 23LC-0004 վկան նկարագրում է, թե ինչպես են ադրբեջանցի զինվորականները սպանել ամուսնու ընկերոջը՝ հանելով նրա աչքերը: Նա նաև նկարագրում է ծառի տակ մի տղայի սպանությունը: Վկան տեսել է նաև ադրբեջանցիների կողմից խեղված հայ կին զինվորականների դիերը: Աղջիկներից մեկի կուրծքը և ոտքը կտրել էին:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին ադրբեջանական ագրեսիայի պատճառով նա կրկին ստիպված էր փախչել Նոր Մարաղայի իր սեփական տնից: Կինն ապրում է Ստեփանակերտում: Այս պահին նա գտնվում է Հայաստանում և չի կարողանում տուն վերադառնալ ադրբեջանցիների կողմից Լաչինի միջանցքի շրջափակման պատճառով, որը շարունակվում է արդեն 91 օր:

4.3 Վկա 22LC-NK0003

Այս վկան 49-ամյա կին է, ով ծնվել և մեծացել է Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Չայլու փոքրիկ գյուղում: 1992 թվականի ապրիլին հայ բնակչության ջարդերի պատճառով նա ստիպված է եղել փախչել իր տնից:

Վկան Մարաղայում ապրել է մինչև 1992 թվականի ապրիլի 10-ը, երբ սկսվել են ջարդերը: Կինը պատմում է, որ մինչ այդ, երբ նա դեռ դպրոցական էր, իր ուսուցչուհին սովորում էր Բաքվում: Մի օր, երբ ուսուցչուհին ավտոբուսով մեկնում էր Բաքու, Ադրբեջանի իշխանությունները խուզարկում են ավտոբուսը՝ փնտրելով հայերի: Ավտոբուսում նա միակ հայուհին էր: Նրան դուրս են բերել ավտոբուսից, ծեծել և շպրտել ճանապարհի եզրին: Նա հոսպիտալացվել էր ծանր վիճակում: Ականատեսը պատմում է նաև այն տխուր պատմությունը, թե ինչպես է Մարաղայում իր հարևանուհին խելագարվել այն բանից հետո, երբ ադրբեջանական ուժերը պատուհանից դուրս են նետել իր երեխաներին ՝ սպանելով նրանց:

Նրա որդին սպանվել է 44-օրյա պատերազմի ժամանակ: Վկան նշում է պատերազմի մշտական վախը, անքնությունը, ուժեղ հուզական լարվածությունը, սարսափն ու

հուսահատությունը, որոնք նրան մանկուց ուղեկցում են մինչ օրս: 44-օրյա պատերազմի ժամանակ նա կորցրել է իր երկհարկանի տունը, մեքենան և ոսկեղենը Ստեփանակերտում: Այս վկան այժմ ապրում է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում:

4.4 Վկա 21LC-NK0017

21LC-NK0017 վկան ծնվել և մեծացել է ԼՂ Ասկերանի շրջանում: Նա չորս անգամ հարկադրաբար տեղահանվել է Ասկերանից՝ 1992 թվականին ադրբեջանցիների կողմից հայ բնակչության ջարդերի, 2016 թ.ապրիլին և 2020 թ. սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի և ադրբեջանցիների պահվածքի պատճառով, որոնք 2022թ. փետրվարին իր գյուղում հայերի մոտ հոգեկան մեծ ապրումներ ու վախ էին առաջացրել:

Վկան ասում է. «Տարիներ շարունակ մենք ադրբեջանցիների վախով ենք ապրել»: Կինը պատմում է, թե ինչպես է այն ժամանակ 14-ամյա իր տեգրոջ հետ ձիով ուտելիք ուղարկել դաշտ: Լսեցին ձիու փռնչոցը, որը վերադարձավ: Ադրբեջանցիները գնդակահարել էին 14-ամյա պատանուն: Նա պատմում է, որ 1990թ. նոյեմբերի 15-ին ադրբեջանցիները գնդակոծել էին Խրամորթը և սպանել գյուղի բուժքույր Ռոզա Հարությունյանին, ով փրկել էր իր և հարևանների երեխաների կյանքը՝ ծածկելով նրանց իր մարմնով: 1990 թվականի դեկտեմբերի 31-ին ադրբեջանցիները մտել էին գյուղ և այնտեղ մնացել երկու տարի: Մինչև 1990թ. դեկտեմբերի 31-ը բնակիչները թաքնվում էին դպրոցի նկուղում, քանի որ ադրբեջանցիները կրակում էին: Հայրը փորձել է տատիկին նկուղից տեղափոխել, բայց տատիկը չէր հեռանում: Նա ասում էր. «Ռաշտի, դու երիտասարդ ես, վերցրու երեխաներիդ ու ընտանիքիդ ու գնա: Ես ծեր կին եմ, նրանք ինձ ոչինչ չեն անի»: 21LC-NK–17 վկան ասում է. «Նրանք սպանեցին իմ տատիկին և ոչ միայն սպանեցին, այլև այրեցին նրան նկուղում: Երբ պապս գնաց նրան փրկելու, նա արդեն այրված էր: Նրանք փաթաթել էին նրան վերմակի մեջ և նետել ջուրը: Նրա մարմնից մի քանի մնացորդ էր մնացել»: Վկայի հայրը և համագյուղացիները 40 օր փնտրել են նրա պապիկին և ևս մեկ տարեց տղամարդու: Նրանք գտել էին Հայրապետի դին, իսկ պապին՝ ոչ: Վկան ասում է. «Շատ տարեցներ մնացին գյուղում, և ադրբեջանցիները դաժանաբար սպանեցին նրանց: Մեր գյուղի հարևան տիկին Սաթենիկին խաչել էին»:

44-օրյա պատերազմից հետո՝ 2020 թվականի դեկտեմբերին կինը և իր ընտանիքը վերադարձան իրենց գյուղ՝ Խրամորթ: Սակայն 2022թ. փետրվարի 24-ին, երբ նա դասավանդում էր դպրոցում, նրանք լսեցին, թե ինչպես են ադրբեջանցի զինվորականները բարձրախոսով հայտարարություններ անում: Նրանք ասում էին. «Դուք գտնվում եք Ադրբեջանի տարածքում: Լքեք տարածքը: Ոչ մի գյուղատնտեսական աշխատանք մի՛ արեք, այլապես հարձակում կլինի: Հեռացեք, որպեսզի փրկեք ձեր

երեխաներին»: Այս հայտարարությունները տևեցին մեկ ամիս: 2022թ. մարտի 7-ին ադրբեջանցիները բարձրացան սարերի վրա և սկսեցին կրակել գյուղում մարդկանց վրա: Վկան վերցրել էր երեխաներին և դուրս եկել Խրամորթից: Նա ասում է, որ այժմ մի քանի օրը մեկ ընդամենը մի քանի ժամով նա այցելում է Խրամորթ: Ոչ մի երեխա այնտեղ չի մնացել: Որոշ մարդիկ գնում են այնտեղ իրենց բերքը հավաքելու, բայց նրանց վրա կրակում են: Վկան զայրացած ասում է. «Խրամորթը նրանց հողը չէ: Սա մեր ժողովրդի հողն է: Այն մեզ է պատկանում է: Ո՞վ է նրանց իրավունք տվել մտնել մեր երկիր և մեզ ասել, թե ինչ անել»: Նա նշում է, որ ադրբեջանցի զինվորականները գտնվում են գյուղից 700-800 մետր հեռավորության վրա: Նրանք չեն կարողանում վերադառնալ իրենց գյուղ՝ այցելելու իրենց գերեզմանները կամ բերքահավաք անել: Կինն այժմ ապրում և դասավանդում է Ստեփանակերտում:

4.5 Վկա 22LC-0049

Այս վկան 70-ամյա տղամարդ է, ով ծնվել և մեծացել է Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղում: Նա երեք անգամ ենթարկվել է բռնի տեղահանման: 1992 թվականի ապրիլի 10-ին ադրբեջանցիների կողմից հայ բնակչության ջարդերի պատճառով նա փախել է Մարաղայի իր տնից և նոր կյանք սկսել Աղավնոյում:

Վկան նշում է, որ Մարաղայի ան փողոցում, որտեղ նախկինում ինքն ապրել է, տարեց մարդիկ շատ կային: Նա փախել է Մարաղայից ադրբեջանական զինուժի գնդակոծության ժամանակ: Վերադառնալով՝ նա տեսել է, որ գյուղը պատված է ծխով և այրվում է: Հայտնաբերվել է 4 խաղաղ բնակչի դի: Նրանց մեջ էր նաև իր հայրը: 22LC-0049 վկան ասում է. «Հորս գլուխը կացնով երկու մասի էին բաժանել: Եվս մեկ դիակ գլխատված էր: Մեկ այլ դիակ ամբողջովին առանց ոսկորների էր. նրանք տանկով անցել էին նրա վրայով: Մի տարեց կին գազանաբար սպանվել էր», - արցունքն աչքերին ասում էր նա: Վկան 44-օրյա պատերազմի ժամանակ կորցրել է որդուն և ունի եղբայր, ով անհետ կորած է համարվում: Նա ապրում էր Լեռնային Ղարաբաղի Աղավնո գյուղում, սակայն 2022 թվականի օգոստոսին ստիպված էր լքել իր տունը, քանի որ Լաչինի միջանցքը, որտեղ նա ապրում էր, հանձնվել էր Ադրբեջանին: Վկան ներկայումս տեղահանվել է և բնակվում է Հայաստանում:

4.6 Վկա 22LC-NK0018

Այս վկան 75-ամյա կին է, ով ծնվել և մեծացել է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում: 22LC-NK0018 վկան Հադրութում ապրել է 1960-ական թվականներից, երբ Լեռնային Ղարաբաղը գտնվում էր Խորհրդային Միության տիրապետության տակ: Նա հիշում է պատմություններ, թե որքան դժվար էր կյանքը, երբ

Լեռնային Ղարաբաղը գտնվում էր Խորհրդային Ադրբեջանի տիրապետության տակ: Նա լրագրող է, ինչպես նաև խորհրդարանի նախկին պատգամավոր 1990-ականների վերջին, երբ Լեռնային Ղարաբաղն ազատագրվեց Ադրբեջանից: Նա ավելի քան 57 տարի բնակվում է Հադրութում[36]: Կինն ասում է. «Մանկուց մենք միշտ վախեցել ենք թուրքերից և ադրբեջանցիներից: Մենք միշտ վախեցել ենք և փորձել ենք զգույշ լինել»: Նա հիշում է, թե ինչպես 1990 թվականին նա և իր ընկերները դեմ առ դեմ հանդիպել էին մի ադրբեջանցու, ով նրանց խորհուրդ էր տվել փախչել, քանի դեռ նրանք չէին սպանել իրեն և իր հետ գտնվող մարդկանց: Նա պատմում էր 44-օրյա պատերազմի ընթացքում իր փորձառությունների մասին: Հրետակոծությունների և ռմբակոծությունների պատճառով, որը տեղի էր ունեցել այն ժամանակ, երբ Ադրբեջանը հարձակվել էր և գրավել Հադրութը, նա և իր ընտանիքը փախել էին Երևան: Շատերի պես նա ժամանակ չի ունեցել իրերը հավաքելու և հեռացել էր միայն իր վրա եղած հագուստով: 2020 թվականի հոկտեմբերի 20-ին սոցցանցերում նա դիտել է ադրբեջանցի զինվորների տեղադրած տեսանյութը, որտեղ երևում էր, թե ինչպես են նրանք նստած իր տանը: Այնուհետև, 2020թ. հոկտեմբերի 30-ին կինը տեսել էր նմանատիպ մի տեսանյութ, որտեղ, այս անգամ երևում էր, թե ինչպես է իր տունն այրվում: Տե՛ս հատվածները ցուցմունքներից/վկայությունից մաս առաջին և մաս երկրորդ:

Այնուհետև հաջորդեցին ավելի վատ լուրեր. Հադրութում մնացած խաղաղ բնակիչների, այդ թվում՝ իր հարևանուհու 30-ամյա որդու սպանությունը: Կինն ասում է, որ երազում է Հադրութում գտնվող իր տան մասին: Նա ասում է. «Ես գերադասում եմ ապրել Հադրութում վրանի մեջ, քան Երևանում տանը»: Նա այժմ ապրում է Ստեփանակերտում և դասավանդում է:

4.7 Վկա AUA0030

AUA0030 վկան 54-ամյա կին է, ով ծնվել և մեծացել է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանում: Նա ապրում էր Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանում, որն այժմ գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ: Հադրութի մուտքի մոտ առաջինը վկայի տունն էր: Վկան Հադրութից հեռացել է 44-օրյա պատերազմի ժամանակ և անվտանգության նկատառումներից ելնելով մեկնել Հայաստան: Նրա ամուսինն ու գյուղապետը փորձել են համոզել նրա ծնողներին՝ 82-ամյա կնոջը և 86-ամյա տղամարդուն, նույնպես հեռանալ, սակայն նրանք հրաժարվել են: 2020 թվականի հոկտեմբերին նա վերջին անգամ է հեռախոսով խոսել ծնողների հետ: Կինն ասում է. «Մենք չէինք կարծում, որ մեր ժամանակներում հնարավոր է նույն բանը, ինչ 1990-ականներին էր: Մենք դրան չէինք հավատում»:

[36] 44-օրյա պատերազմի արդյունքում Հադրութն անցավ Ադրբեջանի վերահսկողության տակ: Այն այժմ

Ավելի ուշ՝ 2020 թվականի դեկտեմբերին, որոնողական խումբը պատշգամբում հայտնաբերել էր նրա մոր դին: Նա սպանվել էր գլխին արձակված կրակոցից, իսկ ականջօղերը պոկել էին նրա ականջներից: Վկայի հայրը նույնպես հայտնաբերվել էր բակում սպանված: Դիահերձման արդյունքների համաձայն՝ նրա ծնողները սպանվել են 2020 թվականի հոկտեմբերին:

AUA0030 վկան նաև նշեց, որ որոնողական ջոկատում մի տղամարդ կար, ով փնտրում էր իր 14-ամյա որդուն: Նրա որդու դին հայտնաբերվել էր գյուղերից մեկում՝ հողի մեջ թաղված:

AUA0030 վկան պատմեց նաև իր հարևանուհու մասին, ով սպանվել էր իր բակում՝ սոխ մաքրելիս: Նա մահացել էր ադրբեջանցիների կողմից գյուղը գնդակոծելու ժամանակ: Վկան նշեց, որ 1990-ականների սկզբին ադրբեջանական հրետակոծության հետևանքով իր հարևանն արդեն կորցրել էր ձեռքը, բայց այս անգամ նա ողջ չէր մնացել:

Վկան կորցրել էր իր տունն ու հողը: Նա իր հեռախոսում ցույց էր տալիս իր տանը գտնվող ադրբեջանցիների և երկու հայի մահապատժի տեսանյութերը: Կինը ճանաչում էր տեսանյութում ցուցադրվող երկու հայերին, ովքեր գնդակահարվել էին Հադրութի կենտրոնում: Նրանց փաթաթել էին հայկական դրոշով և մի քանի անգամ գնդակահարել: Կինը հավելեց, որ նրանք հասարակ մարդիկ էին, բանվորներ և խաղաղ բնակիչներ, ովքեր փորձում էին փախչել Հադրութից, բայց շատ ուշ էր: Ադրբեջանցիները գրավել էին Հադրութը, գերեվարել նրանց. փաթաթել հայկական դրոշով և քաղաքի կենտրոնում մի քանի անգամ կրակել նրանց վրա՝ այդ ամենը տեսանկարահանելով և տեղադրելով սոցիալական ցանցերում: Վկան այժմ տեղահանվել է և բնակվում է Հայաստանում:

4.8 Վկա 22LC-0037[37]

22LC-0037 վկան 42-ամյա կին է, ով ծնունդով Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանից է:

1992 թվականի օգոստոսի 15-ին նրա պապը սպանվել էր Հադրութի իր տան բակում «Գրադի» հարվածից: 44-օրյա պատերազմի ժամանակ՝ 2020թ. հոկտեմբերին, վկան և նրա ընտանիքը ապահովության նկատառումներից ելնելով ստիպված են եղել փախուստի դիմել, սակայն հայրը հրաժարվել է տարհանվել և մնացել է տանը: Վկայի եղբայրը նրան (վկային) մեքենայով դուրս է բերել քաղաքից, բայց ինքը հետ վերադարձել Հադրութ: Վկան նշում է, որ ադրբեջանցի զինվորներն ապրել են իր տանը և պատանդ են վերցրել իր հորն ու եղբորը: Վկան ցույց է տվել սոցիալական ցանցերում ադրբեջանցի

ամբողջությամբ հայաթափվել է

[37] Գերության մեջ գտնվող հոր և եղբոր խոշտանհման, մարմնական վնասվածքների լուսանկարներն հասանելի են

զինվորների տեղադրած մի քանի տեսանյութեր, որոնցում նրա հորը ստիպում են համբուրել ադրբեջանական դրոշը, իսկ եղբորը ստիպում կրկնել՝ «Ղարաբաղը Ադրբեջան է»: Նրա հայրն ու եղբայրը երկուսն էլ գերեվարվել են: Նրա հորը խոշտանգել էին և ի վերջո ազատ արձակել 2020թ. դեկտեմբերի 24-ին: Այդ վերաբերմունքի արդյունքում նրա մարմնի վրա բազմաթիվ սպիներ են մնացել: Ադրբեջանում պահվելու ժամանակ նրա եղբայրը նույնպես խոշտանգվել է և սպանվել գերության մեջ: Եղբոր մարմինը գտել են 2021թ. հունվարի 18-ին՝ պոլիէթիլենով փաթաթված և թաղված: Դիահերձման արդյունքում պարզվել է, որ նա մահացել է սուր, ծակող առարկաներից ստացած բազմաթիվ վնասվածքների, խոցված վերքերի, ինչպես նաև ճակատի, ուսի, կրծքավանդակի հրազենային և ականջի վնասվածքներից: Մի քանի տեսանյութեր կային, որոնցում երևում էր, որ նրա եղբայրը գերեվարվել է Ադրբեջանի զինված ուժերի կողմից, սակայն Ադրբեջանի իշխանությունները հերքել են դա: Այս իրադարձությունները ծանր տրավմա են հասցրել նրա հորը, ով այդ իրադարձություններից հետո սրտի կաթված է ստացել: Հայրը սկսեց շատ քիչ խոսել և ինքնամփոփվեց: Կինը կորցրել էր իր տունն ու հողը Լեռնային Ղարաբաղում: Նա նշեց, որ իր հարազատների գերեզմանները գտնվում են Հադրութում, սակայն ինքը չի կարող վերադառնալ Հադրութ՝ նրանց այցելելու: Նա բռնի տեղահանված է և ապրում է Ստեփանակերտում:

4.9 Վկա 21LC-0064

21LC-0064 վկան 42-ամյա կին է, ով ծնվել և մեծացել է ԼՂ Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում: 44-օրյա պատերազմի հետևանքով 2020 թվականի հոկտեմբերի 11-ին նա փախել է գյուղից: Նրա 67-ամյա սկեսրայրը հրաժարվել է լքել գյուղը: Նա ավելի ուշ Կարմիր Խաչի միջազգային կոմիտեից (ԿԽՄԿ) տեղեկացել է, որ նրան սպանել են իր տանը ադրբեջանցիները, իսկ մարմինը նետել են տան դարպասի մոտ: Դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ նրա մահը վրա է հասել հրազենային վնասվածքի հետևանքով, իսկ նրա մարմինը բազմիցս վրաերթի է ենթարկվել ավտոմեքենայով: Վկան նաև նշեց, որ սկեսրայրից բացի սպանվել է գյուղից 2 խաղաղ բնակիչ՝ 47-48 տարեկան և 81 տարեկան տղամարդիկ: Վկան նշեց, որ ադրբեջանցի զինվորները պղծել են նաև իր հոր, սկեսուրի և տեգրոջ գերեզմանները: Նրա եղբայրը գերեվարվել է, և նա տեսել է տեսանյութեր, որոնք ադրբեջանական ուժերը հրապարակել էին սոցիալական ցանցերում, որտեղ երևում էր, որ իր եղբայրը գերության մեջ է: Նրա եղբայրը գերեվարվել է Ֆիզուլիում՝ տարածք, որն այժմ գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ:

Վկայի հորեղբայրը սպանվել է 1990-ականներին՝ Ադրբեջանի հետ առաջին պատերազմի ժամանակ: Բացի այդ, նրա տեգրը սպանվել է 44-օրյա պատերազմում, իսկ սկեսրայրը խոշտանգումների է ենթարկվել, ապա սպանվել ադրբեջանցի զինվորների կողմից: Վկան

հավելում է, որ իր երկու դուստրերն այժմ փախստական են դարձել: Հաղրութում կորցրել է իր տունն ու այգին: Նա բռնի տեղահանված է և ներկայումս ապրում է Հայաստանում:

4.10 Վկա 21LC-0023[38]

21LC-0023 վկան 48-ամյա կին է, ով ծնվել և մեծացել է Հայաստանի Գյումրի քաղաքում: Նա հայ զինվորի մայր է: Նրա որդին ծնվել է Գյումրիում, որտեղ ապրել է մինչև 6 տարեկանը, որից հետո ընտանիքը 2012 թվականին տեղափոխվել է Ռուսաստան: Վկայի որդին իր կյանքի մեծ մասն ապրել է Ռուսաստանում և 2020 թվականի օգոստոսին վերադարձել Հայաստան՝ զինվորական ծառայության անցնելու համար: Վերջին շփումը որդու հետ եղել է 2020 թվականի հոկտեմբերի 11-ին, Հաղրութում: 2020 թվականի դեկտեմբերի 19-ին վկան տեսել է սոցցանցերում ցուցադրվող տեսանյութեր և անմիջապես ճանաչել իր որդուն, ով Ադրբեջանում գտնվում է գերության մեջ: Ադրբեջանը հերքել է իր որդուն կալանքի տակ պահելու փաստը: Նա դիմել է ԿԽՄԿ-ին, սակայն Բաքվում մյուս ռազմագերիներին այցելությունների ժամանակ նրան չեն գտել: 2020 թվականի դեկտեմբերին վկան դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)՝ խնդրելով Ադրբեջանին տեղեկատվություն տրամադրել իր որդու կալանքիտակ պահելու պայմանների մասին, սակայն Ադրբեջանի կողմից պատասխան չի եղել: Նրա որդու մարմինը հայտնաբերվել է 2020 թվականի դեկտեմբերին՝ խոշտանգված և սպանված, սակայն վկան նրան նրան ճանաչել է միայն 2021 թվականի ապրիլին: Նրան գլխատել են և այրել, այնպես, որ անճանաչելի է դարձել: Ոտքերի վրա եղել է երկու հրազենային վնասվածք, կրծքավանդակի վրա՝ 2-3 կտրած-ծակած վերք, աջ ձեռքի մաշկը կտրված է եղել: Դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ ներքին օրգանները բացակայում են, կողոսկրերը կոտրված են: Մահվան ամսաթիվը չի հաջողվել որոշել գլխատման պատճառով:

[38] Լուսանկարները հասանելի են